քաղաք։ Եւ միւս նաւն յետ աւուր միոյ եհաս մեզ անդ. և միւս նաւն յետս կոյս արկանէ հողմն ի Կիպրոս, ընդ որ եկեալն էր ընդ մեզ։ Եւ Բշի երեկոյի ելեալ անտի յԱտալիայ՝ ի Նաւահանգիստս մեր, որ Մայիսի Զ[1]) էր։ Եւ այգուցն (7 Մայիս) մտաք ի քաղաքն և կացեալ անդ ի պարտէզսն, ԺԳ[2]) Մայիսի Բշի աւուր Գ նաւի ընկերովք հեծեալ ի ջորի ելաք ի ճանապարհ։ Եւ վասն տկարութեան մերում ի ճանապարհի չկարացի յամենայն աւուր գրել զիջևանի տեղիսն մեր։ Բայց Կիրակի աւուր ԺԹ[3]) Մայիսի կէս եղեալ ճանապարհին, ի դաշտ մի հանգեաք զայն օր, որում միջի կայր տեղիք ջրոց զի եռայր յերկրէ՝ ցուրտ և բարեհամ։ Եւ ի միւսում Կիրակի Մեծահրաշի (26 Մայիս) զլեգուն ծովին անցաք, որ տիլ ասեն և այգուցն Մայիսի ԻԷ Բշի Ը-րդ ժամու երթայաք մինչ ի տեղին, որ ասի Կէմիքլի տէտէ, ուր ընդ առաջ մեր եղեն ի քաղաքէն մերձաւորք սիրելիք և բարեկամք. և այլ առաջ՝ ի Փէնտիկ տեղին կոչեցեալ՝ այլ ևս յազգայնոց, այլ ևս առաջ՝ ի Խարդալ, և անդ գտեալ նաւ մի, եդին ի միջի զմեզ մերովք, և ընդ մտանել արեգական մտաք և մեք ի քաղաքն մեր և գնացեալ յեկեղեցի Սրբոյն Սարգսի, և անտի ի տուն՝ ամենայն բարեկամօք, ազգայնօք և սիրելեօք ամենայն աւուր Զ ոգով և Հ-ով նստէաք ի սեղան։ Եւ այլ ամենայն ուխտաւորք առաւօտուն եկին, հասեալ իւրաքանչիւր ըստ՝ ի տունս իւրեանց և ի սիրելիս։

Արդ յորժամ ելաք ի քաղաքէս Օգոստոսի Ե, մինչ ԻԸ Օգոստոսի հասաք ի սուրբ Երուսաղէմ քաղաք, ԻԳ օր ի ճանապարհ կացեալ։ Եւ ի սուրբ Երուսաղէմ Ը ամիս կացեալ՝ պակաս Ե օր։ Եւ ի դառնալն յԵրուսաղէմէ ի քաղաքս մեր Խ աւուրքք հասեալ, որ Մա-

1) Է։ 2) ԺԲ։ 3) ԺԸ։